անկախ այն բանից երկիրը ինդուստրիալ առումով զարգացած է թե ոչ, հասարակության սոցիալիստական վերակառուցման գործում բանվոր դասակարգի դերը ոչ մի չափով չի նվազում. նա ամենուրեք մեծ է ու անգնահատելի։ Աշխատության նույն էջում հեղինակը խոսելով գյուղատնտեսության վերականգնման, աշխատավորության նվազագույն պահանջմունքների բավարարման, բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման գործում նէպի կարևորագույն դերի մասին, միաժամանակ նշում է, որ «նէպը... սոցիալիստական արդյունաբերության զարգացման և կապիտալիստական շրջապատում, մեկ առանձին երկրում սոցիալիստական հասարակարգ կառուցելու հիմնական նախապայմանն էր»։ Ինչ խոսք, դժվար է գերագնահատել նոր տնտեսական քաղաքականության դերը սոցիալիզմի կառուցման գործում մեկ առանձին երկրում վերցրած։ Սակայն հեղինակի նման ձևակերպումը ընթերցողների մոտ կարող է ստեղծել այն թյուր կարծիքը, որ նէպը պիտանի է միայն կապիտալիստական շրջապատման մեջ գտնվող մեկ առանձին երկրի համար, բայց ոչ նաև այն երկրների համար, որոնք միայնակ չեն կապիտալիստական շրջապատման մեջ և ստանում են սոցիալիզմի հզոր լաբերի տնտեսական, քաղաքական, անհրաժեշտության դեպքում նաև՝ ռազմական աջակցությունը։

Նման օրինակները, որոնց թիվը կարելի է ավելացնել, բավ չեն կարող ստվեր դցել աշխատության վրա, նսեմացնել նրա գիտական արժեքը։ Այդ օրինակները, որպես մասնավոր վրիպումներ, ուղղակի անհամեմատելի են աշխատության կուռ տրամաբանության ու կառուցվածքի հետ։

ԱԼԲԵՐՏ ՄԿՐՏՉՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ, Երևանի զարգացումը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, *փաստաթղթերի ժողովածու, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1978, 491 էջ։*

Երևանի պատմությունը լուսաբանվել է առանձին մենագրություններում և ավելի հանգամանորեն ու գիտականորեն վեր է հանվել հենց իր՝ բազմավաստակ պատմաբան Թ. Հակոբյանի, եռհատորանոց ծավալուն աշխատության մեջ։ Սակայն քաղաքի պատմության փաստաթղթերն ու վավերագրերը, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, ամբողջական ձևով առ այսօր չեն հրապարակվել։ Ներկա ժողովածուով Թ. Հակոբյանն առաջին քայլն է կատարում այդ բացը վերացնելու ուղղությամբ։ Նա ժողովածուում զետեղել է համարյա բացառապես արխիվային չհրապարակված կարևորագույն փաստաթղթեր։ Այդ նյութերը նա հավաքել է Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Երևանի պետական կենտրոնական պատմական արխիվներից, ՍՍՀՄ ռազմապատմական պետական կենտրոնական արխիվից, ինչպես նաև Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանից ու Հայաստանի պատմության թանգարանից։

Հեղինակը, ինչպես և պետք էր սպասել, ժողովածուում տեղավորել է բազմաքանակ նյութերից միայն այն փաստաթղթերն ու վավերագրերը, որոնք ավելի արժանահավատ են և ավելի ամբողջական լույս են սփռում այս կամ այն հարցի վրա։ Այդ նյութերը նա դասավորել է ըստ թեմատիկայի և ժամանակագրական կարգով, ամփոփելով քաղաքի քաղաքական պատմության, վարչական վիճակի, տնտեսական ու հասարակական կյանքի, սոցիալական և ազատագրական-հեղափոխական շարժումների, մշակութային կյանքի և այլ բաժիններում։ Հեղինակը պահպանել է փաստաթղթերի ու վավերագրերի բնագրային լեզուն, իսկ ծանոթագրությունները տվել է բուն տեքստում, առնելով դրանք փակագծերի մեջ։

Թ. Հակոբյանի կազմած ներկա ժողովածուն մի հիմնական նպատակ ունի՝ ցույց տալ Երևանի զարգացումը Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացումից մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն ընկած ժամանակամիջոցում։ Ասենք անմիջապես, որ նա հասել է իր նպատակին։ Հեղինակի հրապարակած նյութերը պատմում են այն փորձերի մասին, որոնք ձեռնարկում էին ռուսական զինվորական իշխանությունները Երևանը գրավելու ուղղությամբ։ Նրանք ցույց են տալիս, թե ինչպիսի հերոսությամբ էին կռվում ռուս զինվորները և ինչպիսի արիությամբ էին օգնում նրանց հայերը։ Փաստաթղթերը մերկացնում են արևմտաեվրոպական երկրների հակառուսական գործունեությունը Պարսկաստանում և Արևել-

յան Հայաստանում, որոնք ամեն կերպ ձգտում էին խանգարել Ռուսաստանի առաջխաղացմանն Անդրկովկասում։ Ցնայած դրան, 1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանը գրավվում է ու Արևելյան Հայաստանի հետ միասին միացվում Ռուսաստանին։ Այնուհետև սկսվում է քաղաքի վարչական կյանքի վերակառուցումը և ռուսական վարչական ապարատի հաստատումը։ Վավերագրերը ցույց են տալիս, որ 1870 թ. հունիսի 16-ի ցարական քաղաքային կանոնադրությունը միայն 1879 թ. է կիրառվում Երևանում, որի հետևանքով ստեղծվում է քաղաքային դուման։ Արժեքավոր է հատկապես այդ դումայի ընտրությունների կանոնադրությունը պարունակող փաստաթուղթը, որը վկայում է, թե ինչ թերություններով էին կենսագործվում կառավարության քաղաքային ռեֆորմները Երևանում,

Ժողովածուում արժեքավոր նյութեր կան քաղաքի տնտեսական կյանքի մասին։ Նրանք պատմում են ցարական կառավարության տնտեսական քաղաքականության, Երևանում շուկայական գների տեղաշարժերի, հողի ու զանազան կառույցների վաճառքի, պետական հասութաբեր հողերի վարձակալության, քաղաքացիների ունեցվածքի, դրանց օգտագործման եղանակների, արհեստավորների և արհեստագործական ձեռնարկությունների գործավորների թվաքանակի աճի կամ նվազման, առևտրականների քանակի ու նրանց կարողությունների, «գործարաններին» ու «ֆաբրիկաներին» թվաքանակի աճի ու նվազման, շրանցքների զարգացման, հաղորդակցության ու փոխադրական միջոցների բարելավման և բազմաթիվ այլ հարցերի մասին։ Այդ հարցերի միայն թվարկումը ցույց է տալիս, թե հեղինակը որքան բազմակողմանի է ներկայացնում քաղաքի տնտեսական կյանքը։ Բայց դա դեռ բոլորը չէ։ Հրապարակված նյութերը համոզիչ կերպով վկայում են նաև քաղաքի տնտեսական կյանքի զարգացման մասին XIX դ. և XX դ. սկզբին։ Ընթերցողն այդ նյութերով կարող է կոնկրետ պատկերացում կազմել Երևանի բնակչության կենսամակարդակի, արդյունաբերության մի շարք նոր ճյուղերի առաջացման ու զարգացման, հաղորդակցության միջոցների բարելավման, բուրժուազիայի ու պրոլետարիատի ձևավորման և այլ կարևոր տեղաշարժերի վերաբերյալ։

Ժողովածուում զետեղված նյութերը այնուհետև պատմում են Երևանի բնակչության և հասարակական կյանքի մասին։ Դրանք ցույց են տալիս, թե ցարական իշխանությունները և հայ բարձր հոգևորականությունը ինչպես էին կազմակերպում հայ բնակչության ներգաղթը և բնակեցումը Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում և Երևանում, պատմում են նաև ցարիզմի հարկային քաղաքականության, բանվորների աշխատավարձի փոփոխության, 1915 թ. շարդերից ազատված և Երևանում տեղավորված արևմտահայ գաղթականների դրության և այլ հարցերի մասին։

Հարուստ և արժեքավոր են ժողովածուի ազատագրական, սոցիալական և հեղափոխական բաժնի փաստաթղթերը։ Դրանց հիման վրա կարելի է բավականին հանգամանորեն իմանալ 1827 թ. կազմված հայկական աշխարհազորի, «Հայասեր», «Ազգասեր» կազմակերպությունների, ցարիզմի հայահալած քաղաքականության, 1905—1907 թթ. հեղափոխական շարժումների, աշակերտական հուզումների, 1910—1917 թթ. սոցիալական խմորումների, բանվորական, զինվորական և աշակերտական ելույթների մասին։ Այդ փաստաթղթերի մեծ մասն առաջին անգամ է հրապարակվում, իսկ մի զգալի բաժինը նորություն է նույնիսկ մասնագետների համար։

Հրապարակված նյութերը լուսաբանում են նաև քաղաքի կոմունալ պայմաններն ու ներքին կյանքը։ Նրանք ցույց են տալիս Երևանի քաղաքային եկամուտների ու ծախսերի չափերը, քաղաքի լուսավորման եղանակներն ու միջոցները, բարեկարգումն ու կառուցումը, շրամատակարարման կազմակերպումը, ձիաքարշի ստեղծումն ու կանոնավորումը, հեռախոսային ցանցի հիմնումը և այլն։ Ընթերցողը տեսնում է, որ դրանց ճնշող մեծամասնությունը Երևանում ստեղծվել ու զարգացել է Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացումից հետո միայն։

Չափազանց հետաքրքիր ու գնահատելի են նաև քաղաքի կրթական կյանքին վերաբերող փաստաթղթերն ու վավերագրերը, որոնք ցույց են տալիս Երևանի դպրոցական կյանքի զարգացումը սկսած 1830-ական թվականներից մինչև 1917 թ.։ Այդ նյութերը վիճակագրական տվյալներ են պարունակում դպրոցների, աշակերտների և ուսուցիչների թվաքանակի աճի, ուսուցման գործի բարելավման ու բարեկարգման մասին։

Ժողովածուի վերջին բաժնում զետեղված են ընդհանուր հաշվետվություններ ու տեղեկություններ քաղաքի բնակչության սոցիալական կառուցվածքի, պետական ունեցվածքի, եկեղեցիների, դպրոցների, հիվանդանոցների, արդյունաբերական ձեռնարկությունների թվաքանակի, առևտրական կյանքի, գյուղատնտեսական գրաղմունքների, հարկերի հավաքման, թերաքների կուտակման, հաղորդակցության միջոցների զարգացման, ազգաբնակչության առողջապահու-

թյան, աղանդավորության, ժողովրդական լուսավորության, բանվորական աշխատավարձի և այլ հարցերի մասին։

Ժողովածուն ունի անձնանունների ու տեղանունների ցանկը, որոնք հեշտացնում են նրանից օգտվելը։

Այսպիսով, Թ. Խ. Հակոբյանը հրապարակել է փաստաթղթերի ու վավերագրերի արժեքավոր ժողովածու, որով կարելի է որոշակի գաղափար կազմել Երևանի տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային զարգացման մասին՝ XIX դ. և XX դ. սկզբին։ Այդ նյութերը ցույց են տալիս, թե ինչպես Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միացումից հետո Երևանը դուրս է գալիս դարավոր լճացումից ու ճահճացումից և բռնում վերելքի ուղին. նրա տնտեսությունը դառնում է ավելի բազմաճյուղ, աշխուժանում է քաղաքի հասարակական-քաղաքական կյանքը։

Գրախոսվող ժողովածուն, սակայն, զերծ չէ թերություններից. կառուցվածքի տեսակետից այն կլիներ ավելի կուռ ու նպատակասլաց, եթե միևնույն բովանդակությամբ նյութերը ցրվեին ոչ թե տարբեր բաժիններում, այլ համախմբվեին մեկ բաժնում։ Ավելի կոնկրետ՝ ճիշտ կլիներ, եթե բնակչության, կոմունալ պայմանների և ընդհանուր բաժինների փաստաթղթերը զետեղվեին տնտեսական կյանքին նվիրված բաժնում, քանի որ դրանք վերաբերում են քաղաքի տնտեսությանը։ Մշակութային բաժինը ներկայացված է բացառապես կամ համարյա բացառապես դպրոցական կյանքի վավերագրերով, մինչդեռ այն կարելի էր հարստացնել նաև այլ բնույթի նյութերով (արվեստ, մամուլ և այլն)։ Ժողովածուում բացակայում են որոշ կարևոր փաստաթղթեր (օրինակ՝ Երևանի գրավման մասին), մինչդեռ (ճիշտ է քիչ քանակությամբ) տեղ են գտել այնպիսի նյութեր, որոնք ունեն երկրորդական և երրորդական նշանակություն։ Մի շարք վավերագրեր և վիճակագրական տեղեկություններ հրապարակված են առանց տարեթվերի (էջ 434—435, 440—441, 446—447, 449 և այլն)։

ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ,
Պատմական գիտությունների դոկտոր